ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023թ. հուլիսի 10-ին, N 267-Ա ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՈՍԿԵՎԱԶԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ոսկեվազի Ե. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ն. Հովհաննիսյանի 2023 թվականի հուլիսի 10-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ոսկեվազի Ե. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նաիրա Հովհաննիսյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2022-2023 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2023 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 18-ը ներառյալ:
2. Նաիրա Հովհաննիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ոսկեվազի Ե.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Ոսկեվազի Ե. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Ռուզաննա Վարդանյանի վրա:

3. Նաիրա Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի օգոստոսի 21-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 7/11/2023 16:19:56 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ